

**Արձանագրություն N 7**

**ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի՝  
էլեկտրոնային եղանակով անցկացված արտահերթ նիստի**

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Մինչև 22.08.2019թ. քվեարկել են խորհրդի 10 անդամներից 9-ը:

Չի քվեարկել՝ Արմեն Հայրապետյանը:

**ՕՐԱԿԱՐԳ**

Հավանության տալ որպես վառելիք օգտագործվելու դեպքում հեղուկացված ածխաջրածնային գազերին ներկայացվող պահանջների ստուգման վերաբերյալ ստուգաթերթով կառավարության 2019թ. հունիսի 6-ի թիվ 730-Ն որոշումը լրացնելու մասին կառավարության որոշման նախագծին:

2019թ. օգոստոսի 20-ին խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին է ուղարկվել կառավարության որոշման նախագիծը՝ դրան կողմ կամ դեմ լինելու վերաբերյալ քվեարկություն կատարելու նպատակով: Մինչև 22.08.2019թ. շուկայի վերահսկողության տեսչական մարմնի էլեկտրոնային հասցեին ստացվել են խորհրդի 10 անդամներից 9-ի կողմից ուղարկված «կողմ եմ» բառերը: ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետի համաձայն հեռակա քվեարկությունը համարվում է կայացած:

Խորհուրդը որոշեց հավանություն տալ որպես վառելիք օգտագործվելու դեպքում հեղուկացված ածխաջրածնային գազերին ներկայացվող պահանջների ստուգման վերաբերյալ ստուգաթերթով կառավարության 2019թ. հունիսի 6-ի թիվ 730-Ն որոշումը լրացնելու մասին կառավարության որոշման նախագծին՝ 9 կողմ ձայներով:

Խորհրդի նախագահ՝



Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝



Սուրեն Պետրոսյան